ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3701 ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Հեռ.(0287) 2.12.17, (060)747077
Ֆաքս 2.12.02, (060)747077

N 927
01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Կ.Պողոսյան.

Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև՝ 05.06.2025թ-ին կնքվել է N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման եվ կազմման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր(այսուհետ՝ Պայմանագիր):Հիշյալ պայմանագրի շրջանակներում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն ստանձնել է Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը, որի ժամկետը սահմանված էր մինչև 05.07.2025թ.-ներառյալ:Հաշվի առնելով «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի՝ 24.06.2025թ.-ի գրությունը և N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝25.06.2025թ. կնքված,պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է մինչև 04.08.2025 թ.-ը ներառյալ:Ջերմուկի համայնքապետարանի կոմից՝ 05.08.2025թ.-ին «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ին ուղարկված N 846 ելից գրությամբ տրամադրվել է տասնհինգ օրացուցային օր, այնուհետև 20.08.2025թ. N 904 ելից գրությամբ ևս յոթ աշխատանքային օր ժամկետ՝(որպես ողջամիտ ժամկետ) պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և նախագծանախահաշվային փաստաթղթերը Ջերմուկի համայնքապետարան ներկայացնելու համար՝յուրաքանչյուր ուշացված աշխատանքնային օրվա համար գանձելով N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2ծածկագրով պայմանագրի 5.3 կետով սահմանված տույժը::

Վերոնշյալ ժամանակահատվածներում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն չի կատարել N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները և մինչ օրս Ջերմուկի համայնքապետարան փաստացի չի ներկայացրել ընկերության կողմից հաստատված համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Համաձայն Ջերմուկիհամայնքապետարանի և«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի միջև՝ 05.06.2025թ-ին կնքված ՈՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրովպայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալները՝ Ջերմուկի համայնքապետարանը 01.09.2025թ.-ից միակողմանի լուծում է «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի հետ՝ 05.06.2025թ-ին կնքված ՈՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետիև N ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի 7.11 կետի դրույթները:

«Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած պայմանագրի ապահովումը սահմանված կարգով ներկայացվելու է Ընկերությանը սպասարկող ֆինանսական կառույցին(Բանկ)՝ Ջերմուկի համայնքապետարանին փոխանցելու նպատակով:Սահմանված ժամկետում հիշյալ պայմանագրի ապահովումը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված տույժը չվճարելու դեպքում «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջները

Ծանոթություն:Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

Կատ.՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Սմբատ Պապոյան